ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/144

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Մասնակից՝ «Ջինջ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ջինջ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Էդ. Մեսրոպյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

1. «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում,

2. «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ռաումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8680-2020 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) 08.06.2020թ.-ի թիվ Ե/01/970-20 գրության հիման վրա, 11.06.2020թ.-ին «Ջինջ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.06.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 11.06.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/144 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

17.06.2020թ.-ին, 30.06.2020թ.-ին և 10.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 30.06.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.07.2020թ.-ին:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 08.06.2020թ.-ի թիվ Ե/01/970-20 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) կողմից 2020 թվականի հունվարի 22-ին և 24-ին հայտարարվել են ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7

և ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16 ծածկագրերով, յուրաքանչյուրը չորս չափաբաժնից բաղկացած նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթներ (այսուհետ՝ ընթացակարգեր): Ընթացակարգերի բոլոր չափաբաժինների մասով ընտրված մասնակից է հայտարարվել «Ջինջ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ ընկերություն), որին շնորհվել են պայմանագրերը և ներկայացվել որակավորման ապահովման տրամադրման պահանջ՝ բանկային երաշխիքի տեսքով:

Սակայն, ընկերությունը գրավոր հրաժարվել է պայմանագիր կնքելու գործընթացից, քանի որ չի կարողացել ապահովել բանկային երաշխիքի առկայությունը՝ լրացուցիչ գրավի բացակայության պատճառով՝ նշելով, որ արդեն իսկ հիմնադրամի հետ կնքված պայմանագրերի մասով ներկայացվել է երեսունչորս միլիոն ՀՀ դրամի երաշխիք:

Վերոգրյալի մասով տեղեկացնում ենք, որ ընկերության կողմից միաժամանակ ներկայացվել են հայտեր հիմնադրամի կողմից հրապարակված նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման այլ մրցույթներին՝ ակնկալելով ընտրված մասնակից հայտարարվել դրանցից մի քանիսում: Սակայն, քանի որ գնահատման չափանիշը առավելագույն միավոր ստացած խորհրդատուի ընտրության մեթոդով էր, ընկերությունը, իր համար ևս անսպասելի ձևով, բոլոր մասնակցած ընթացակարգերի մասով ստացել է առավելագույն միավոր, քանի որ ունեցել է որակավորման ամենաբարձր չափանիշները:

Արդյունքում «Ջինջ» ՍՊԸ-ի հետ կնքվել է ավելի քան հիսունհինգ միլիոն ՀՀ դրամի պայմանագիր, որից երեսունչորս միլիոն ՀՀ դրամը՝ բանկային երաշխիքով:

Հաշվի առնելով վերոգրյալը, և համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանմանը սահմանված կարգով գործին ընթացք տալու համար:

Կից ներկայացվում է հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության, «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրության պատճենները, ինչպես նաև Armeps համակարգով պայմանագրի շնորհման մերժման նամակը:»:

3. <u>«Ջինջ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 11.06.2020թ.-ի գրությամբ դիմել է «Ջինջ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2020թ.-ի թիվ

26/26-1/8680-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 18.06.2020թ.-ին ներկայացրած թիվ ԷՄ-66 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՋԻՆՋ ինժեներախորհրդատվական ընկերությունը մասնակցել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնաղրամի (ՀՏԶՀ) կողմից համարյա միաժամանակ հայտարարված խորհրդատվական ծառայությունների (նախագծային աշխատանքներ) 10 մրցույթներին, որոնցից շահող է ճանաչվել 7-ում: Արդյունքում ՀՏԶՀ-ի և ՋԻՆՋ-ի միջև կնքվել են 5 պայմանագրեր, որոնցից երկուսի համար տրամադրվել է պահանջվող պայմանագրային գումարի 110 տոկոսի չափով բանկային երաշխիք՝ որպես գրավ իր բյուջեից սառեցնելով 34 մլն. ՀՀ դրամի չափով գումար:

Ֆինանսական միջոցների սահմանափակության պատճառով մեզ չի հաջողվել ապահովել մեզ շնորհված մնացած երկու ծրագրերով պահանջվող 110 տոկոսի չափով բանկային երաշխիքի ստացումը, որի համար կպահանջվեր լրացուցիչ ևս մոտ 35 մլն. ՀՀ դրամի սառեցում: Ելնելով վերոհիշյալից մենք ստիպված ենք եղել հրաժարվել ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16 և ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7 ծածկագրերով պայմանագրերից:

Ի դեպ, համարյա միաժամանակ մասնակցելով հայտարարված մրցույթներին և լավ տեղեկացված լինելով Հայաստանում նախագծային կազմակերպությունների թվաքանակին և նրանց ակտիվությանը, մենք չէինք կարող ակնկալել, որ մասնակցած 10 մրցույթներից 7-ը կշնորհվի մեկ մասնակցին: Այս երևույթի պատճառը մենք տեսնում ենք պետական գնումներով սահմանված կարգում ընդունված՝ պայմանագրային գումարի 110 տոկոսի չափով բանկային երաշխիքի տրամադրման պարտադիր պայմանում:

Ունենալով 30 տարվա հարուստ փորձ ջրային համակարգերում խորհրդատվական ծառայությունների մատուցման ոլորտներում և մասնակցելով միջազգային տարբեր մրցույթներին, մեր խորին համոզմունքն է, որ պետական գնումներով սահմանված վերը նշված պայմանը չի խթանում խորհրդատվական ընկերությունների ակտիվ ներգրավմանը, այլ ընդհակառակը խոչընդոտում է այն և չի համապատասխանում Կառավարության որդեգրած քաղաքականությանը:

Խորհրդատվական ընկերությունների ակտիվության բարձրացման և գործունեության նպաստման նպատակով կարծում ենք, որ բանկային երաշխիքի տրամադրման կիրառվող պայմանը կարելի է փոխարինել այլ պայմանով, օրինակ «պատասխանատվության ապահովագրությունով», որը ընդունված է և հաջողությամբ կիրառվում է միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից, այդ թվում նաև մեր երկրում:

Հույսով եմ, որ ըմբռնումով կընդունեք մեր մտահոգիչ և անկեղծ բացատրությունը, և հայտնում եմ մեր պատրաստակամությունը աջակցելու ոլորտի աշխատանքներին:»:

4. <u>ՍՑ-LO-2020/144 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.01.2020թ.-ին և ՀՀ Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.01.2020թ.-ին հայտարարվել են համապատասխանաբար «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7» և «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» ծածկագրերով գնման ընթացակարգեր (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ջինջ» ՍՊԸ-ն:

iii. թիվ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7» ծածկագրով ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ջինջ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված առաջարկ ներկայացրած մասնակից:

iv. 11.03.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

v. Հանձնաժողովի 20.05.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 15.05.2020թ.-ի թիվ ԷՄ-48 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելու առաջարկից:

vi. թիվ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.03.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» ծածկագրով ընթացակարգի 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ջինջ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված առաջարկ ներկայացրած մասնակից:

vii. 11.03.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

viii. Հանձնաժողովի 20.05.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 15.05.2020թ.-ի թիվ ԷՄ-48 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելու առաջարկից:

ix. «Ջինջ» ՍՊԸ-ն 15.05.2020թ.-ի թիվ ԷՄ-48 գրությամբ դիմել է Պատվիրատուին և հայտնել է, որ ստիպված է հրաժարվել «ՀՀ Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» (ծածկագիր՝ ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16) և «ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» (ծածկագիր՝ ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7) աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի ստորագրումից՝ ներկայացված պայմանագրային գնի 110 տոկոսի չափով (պայմանագրի ապահովումը՝ 10 տոկոս և որակավորման ապահովումը՝ 100 տոկոս) բանկային երաշխիքի դիմաց նոր գրավի բացակայության պատճառով:

Մասնակիցը նաև նշել է, որ արդեն ստորագրված երկու պայմանագրերով (ծածկագրեր՝ ՋՆ-ԽԲՄ- ԾՁԲ-2020/11/12 և ՋՆԾ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/10) պահանջվող բանկային երաշխիքի համար «Ջինջ» ՍՊԸ-ի կողմից, որպես գրավ, արդեն սառեցվել է 34 մլն. ՀՀ դրամի չափով գումար:

x. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 08.06.2020թ.-ին թիվ Ե/01/970-20 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8680-2020 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 22.01.2020թ.-ին և ՀՀ Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.01.2020թ.-ին հայտարարված համապատասխանաբար «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7» և «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» ծածկագրերով գնման ընթացակարգերին հայտ ներկայացրած «Ջինջ» ՍՊԸ-ն թիվ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 10.03.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության և թիվ «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 10.03.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 1-ից 4-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

«ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7» ծածկագրով Հանձնաժողովի 20.05.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության և «ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16» ծածկագրով Հանձնաժողովի 20.05.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 15.05.2020թ.-ի թիվ ԷՄ-48 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագիր կնքելու առաջարկից:

«Ջինջ» ՍՊԸ-ն 15.05.2020թ.-ի թիվ ԷՄ-48 գրությամբ դիմել է Պատվիրատուին է հայտնել է, որ ստիպված է հրաժարվել «ՀՀ Արարատի մարզի Խաչփար, Արբաթ, Ազատավան և Ղուկասավան բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» (ծածկագիր՝ ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/13-16) և «ՀՀ Արմավիրի մարզի Հովտամեջ, Մուսալեռ, Մեծամոր և Արևաշատ բնակավայրերի ջրամատակարարման համակարգի վերակառուցման» (ծածկագիր՝ ՋՆ-ԽԲՄ-ԾՁԲ-2020/4-7) աշխատանքների նախագծման խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի ստորագրումից՝ ներկայացված պայմանագրային գնի 110 տոկոսի չափով (պայմանագրի ապահովումը՝ 10 տոկոս և որակավորման ապահովումը՝ 100 տոկոս) բանկային երաշխիքի դիմաց նոր գրավի բացակայության պատճառով:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 08.06.2020թ.-ին թիվ Ե/01/970-20 գրությամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն

գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.06.2020թ.-ի թիվ 26/26-1/8680-2020 գրությամբ «Ջինջ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/144 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ